



Համամասնական ցուցակով ընտրվածների թվում է կոալիցիա ներկայացնող Սամվել Հովեյանը, ազգային շարժումից՝ Իրմա Խնկոյանը: Ախալցխիսեի սակրեբուլոյում մեծամասնական մանդատ է ստացել նաեւ Համբարձում Բաբոյանը: Ախալցխիսեի մունիցիպալիտետում սակրեբուլոյի 30 անդամներից 15-ն ընտրվել են մեծամասնական, 15-ն էլ՝ համամասնական ընտրակարգով: Մեծամասնականներից 12-ը կառավարող կոալիցիայից են, 3-ը՝ «Ազգային շարժումից», իսկ համամասնականով՝ մանդատ են ստացել կոալիցիայի 10 եւ ազգայինների 5 ներկայացուցիչ: Համամասնական ընտրակարգով «Վրացական երազանքից» ընտրվել է Տիգրան Մելքոնյանը, իսկ ազգային շարժումից՝ Ռոբերտ Մուրադյանը: Մեծամասնական ընտրակարգով ընտրվել են Արտաշես Բալասանյանը, Պայծառ Մանասյանը, Հարություն Աղաբաբյանը, Սեդա Նահապետյանը եւ Մկրտիչ Գինոսյանը՝ իշխող կուսակցության «Վրացական երազանքից» են:

0000000

Ասպինձայի մունիցիպալիտետի սակրեբուլոյում կլինի 27 պատգամավոր: 12 մեծամասնականներից 8-ը ներկայացնում են «Վրացական երազանք» կոալիցիան: Մեկական մեծամասնական պատգամավոր կունենան «Ազգային շարժումը» եւ Նինո Բուրջանաձեի գլխավորած դաշինքը, երկուսը՝ անկուսակցական պատգամավորներ են: Համամասնական ընտրակարգով 15 պատգամավորից 9-ը ներկայացնում են «Վրացական երազանք», 4-ը՝ «Ազգային շարժումը» եւ մեկական ներկայացուցիչ կունենան «Նինո Բուրջանաձե-Միասնական ընդդիմությունը» եւ «Վրաստանի հայրենասերների այլանսը»: Համամասնական ընտրակարգով «Միասնական ազգային շարժումից» մանդատի է արժանացել Ռոբերտ Նահապետյանը, իսկ մեծամասնականով էմին Բալոյանը՝ «Վրացական երազանքից»:

0000000

Բորժոմի մունիցիպալիտետի 26 պատգամավորից 17-ը՝ «Վրացական երազանքի» ներկայացուցիչներ են: Մեծամասնականի մանդատի են արժանացել Արայիկ Անտոնյանը՝ «Վրացական երազանքից» եւ նախաձեռնող խմբի թեկնածու Անդրուշ Իրիցյանը:

0000000

Աղիգենիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մունիցիպալիտետի 30 անդամներից 21-ը ներկայացնում են «Վրացական երազանքը», 6-ը՝ «Ազգային շարժումը» եւ 2-ը՝ Նինո Բուրջանաձեի գլխավորած դաշինքը: Համամասնական ընտրակարգով պատգամավորի մանդատի է արժանացել «Ազգային շարժման» ներկայացուցիչ Դավիթ Հովհաննիսյանը:

00000

Ծավկայի մունիցիպալիտետում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի մանդատի արժանացան «Վրացական երազանքի» ներկայացուցիչներ Գոչա Խաչատրյանը, Ստեփան Եղոյանը, Սամսոն Թամարյանը, Ռուբեն (Ռազմիկ՝ Հանեսյանը, Թադեոս Թորոսյանը, Հարություն Ավետյանը, Խաչատուր Մազմանյանը, Լեւոն Մարկոսյանը, Հարություն Շահնազարյանը, Լայերտ Թորոսյանը, Ավետիկ Շահբազյանը, անկախ թեկնածու Սարգիս Հովհաննիսյանը, Բուրջանաձեի դաշինքի ներկայացուցիչ Ռեզո Նարինովը: Համամասնականով սակրեբուլոյի պատգամավորներ են ընտրվել կառավարող կոալիցիան ներկայացնող Արտաշ Նազլոյանը, Մաթեոս Բաբոյանը, Բուրջանաձեի դաշինքի ներկայացուցիչ Արարատ Պետրոսյանը, «Ազգային շարժման» ներկայացուցիչ Ասատուր Վարդերեսանյանը:

0000000000

Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյում մանդատները բաշխվել են 15 համամասնական եւ 18 մեծամասնական համակարգով ընտրված պատգամավորներին: Մեծամասնական ընտրակարգով մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամներ են դարձել «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչներ Աիդա Խաչիկյանը, Արսեն Հախվերդյանը եւ Լեւոն Հակոբյանը: